Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

617.7
Ш-51

x 713

0 8 MAY 2013

7848

617.7
Խ-51
ար.

Վ. Վ. ԽԻԹՆԵԱԿՈՎ.

04 AUG 2010

ՏՐԱԽՈՄԱ

Ի՞նչպէս պէտք է մարդիկ պաշտպանեն իրանց աչքերն այդ հիւանդութիւնից եւ չը վարակեն ուրիշներին։

40694
0107

ՓՈԽԱԴՐԵՑ

ԲԺ. Ն. ՏԷՐ-ԻՍԱՀԱԿԵԱՆ

845

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Սանոյեանցի եւ Ստեփանեանցի.
1903

ԿՈՅՐԸ

Дозволено Цензурою 2 Окт. 1902 г. гор. Тифлисъ

Կոյրը անտէր, անօգնական երեխաների նման մի ծանր բեռ է շրջապատողների համար. կեանքը նրա համար ոչ մի արժէք չունի և նա իւր դժբախտ օրերը խաւարի մէջ է անցկացնում։

Ոչ մի պետութեան մէջ այնքան կոյրեր չկան, որքան որ կան Ռուսաստանում։ Սրանից տասն և չորս տարի առաջ, Ռուսաստանի լիսուն նահանգներում կոյրերի թիւը հասնում էր մօտ 150,000-ի։ Այս հաշուի մէջ չեն մտնում Սիբիրն ու երկրի ուրիշ հեռաւոր մասերը։ Ուրիշ խօսքով՝ իւրաքանչիւր հազար հոգուն գալիս է 2 կոյր։ Մի քանի նահանգներում կոյրերի թիւը համեմատաբար շատ է, միւսներում-պակաս, կան տեղեր էլ, ուր իւրաքանչիւր քայլափոխում կը պատահես մի այդպիսի դժբաղդի։

Կուրութեան պատճառները շատ-շատ են. պատահում են 'ի ծնէ կոյրեր կան և կուրացածներ զանազան հիւանդութիւններից, օր. ծաղկից, վեներական հիւանդութիւններից—սիֆիլիսից, սուսանակից։ Վերջին տեսակի հիւանդութիւնից (սուսանակից) աւելի կուրանում են մանուկները, երբ նրանց ծնողները վարակուած են լինում նոյն ախտերով. բայց ռուսաստանում շատ կուրանում են տրախոմայից։

Տրախոման Ռուսաստանում չափազանց շատ է տարածուած։ Ամենից աւելի հիւանդանում են

Վոլգա գետի ափերում գտնուած բնակիչները և գետի ձախակողմեան ներքին նահանգների—Ղազանի, Պերմի, Վեատկայի, Սամարայի, Սարատովի և այլն բնակիչները։ Այդ տեղերում շատ անգամ կարելի է գտնել այնպիսի գիւղեր, որտեղ անպայման բոլորը հիւանդ են տրախոմայով։ Նոյն իսկ միւս նահանգներում էլ դժուար է այնպիսի տեղ գտնել, որտեղ մարդիկ ազատ լինէին տրախոմայից։

Սկզբում Նապոլէոնի պատերազմներից յետոյ Եւրոպայումն էլ տրախոմայով հիւանդանում էին շատերը։ Իսկ այժմ Ֆրանսիայում, որտեղից տրախոման տարածուեց, և Եւրոպական ուրիշ շատ երկրներում հիւանդութիւնը շատ հազուադէպ է, իսկ մի քանի երկրներում բոլորովին անհետացել է։ Բացի Ռուսաստանից հիւանդութիւնը շատ տարածուած է միայն Տաճկաստանում և Ճունաստանում*)։ Եւրոպացիների այդ ցաւից ազատուելը բացատրուում է նրանով, որ նրանք մեզնից աւելի շատ կրթուած են։ Իսկ թէ ինչ կապ կայ կրթութեան և հիւանդութեան պակասելու մէջ, այդ մենք կը հասկանանք այս գրքոյկը կարդալուց յետոյ։

*) Երևանի նահանգում Ալէքսանդրապոլն ամենից շատ վարակուած տեղն է. ոչ մի քաղաք կամ գիւղ չունի այնքան տրախոմայով հիւանդներ, որքան որ կան Ալէքսանդրապոլում։

Երբ որ սկսում է որ և է մէկի աչքերը ցաւել, հիւանդի համար շատ դժուար է իւր ցաւի տեսակը հասկանալ, միայն բժիշկները կարող են որոշել ցաւի յատկութիւնը և զանազանել ուրիշ տեսակ աչքացաւերից։ Իսկ ինքը հիւանդը և նրան տեսնողները կարող են երկար ժամանակ տրախոման ընդունել աչքերի հասարակ բորբոքման տեղ, որ յաճախ է պատահում, մանաւանդ ամառը։ Երբեմն հիւանդը ոչինչ չը նկատելով առժամանակ իրան առողջ տեղ է դնում։

Տրախոման անդգալի կերպով սկսուելով և բանի տեղ չդրուելով, վերջ ի վերջոյ շատ անբաղդութեան պատճառ է դառնում։ Ահա թէ ինչպէս է զարգանում այս հիւանդութիւնը։ Ամենից առաջ հիւանդը նկատում է, որ իւր աչքերն առաւօտները կպչում են, և ճպռատում, յետոյ նա դանդատուում է, որ իւր աչքերը կարծես թէ փոշի լցուած պէս են և կոպերը ծանրանալով դժուարութեամբ են բացուում։ Երբեմն հիւանդը աչքերի մէջ տարութիւն է զգում, նա չէ կարողանում լոյսին նայել։ Երբ որ աչքերն աւելի են ճպռատում, թերթերունքները կպչում են չորացած ճիպռով, որոնք ցախի կապոցների պէս ցցում են դէպի դանդան կողմեր։ Այդ ժամանակ կարելի է տեսնել, որ կոպերն ու աչքի խնձորը սկսում են կարմրել։

Այսպէս առանց զգալի փոփոխութիւնների անցնում են օրեր և մինչև անգամ ամիսներ, միայն յետոյ պարզւում հասկանալի են դառնում հիւանդութեան հետևանքները։ Երբեմն սաստկանալով, երբեմն թուլանալով տրախոման տարիներ է տևում և կամաց-կամաց երևան են գալիս նրա ծանր հետևանքները։ Կոպերը թերթերունքների հետ ծալւում են ներս, իսկ թերթերունքներն սկսում են աչքը քերել, ծակծկել։ Իսկ և իսկ աչքի խնձորի վրայ, այն տեղ, ուր որ գտնւում է բիբը, նրա կողքին երևան է գալիս դեղնամոխրագոյն բիծ։ Այս բիծը շարունակ մեծանում է և կարելի է լինում նկատել, թէ ինչպէս է աճում դրա շուրջը արեան երակները։ Այս ժամանակ հիւանդը ցաւից այլևս բոլորովին չի կարողանում լոյսին նայել։ Երբեմն բծի տեղը աչքի մէջ վէրք է առաջանում։ Թէ բծի և թէ վէրքի պատճառով հիւանդը վատ է տեսնում, իսկ յետոյ աչքի վրայ «հատ» է գալիս իսկ երբ «հատը» ծածկում է բիբը, այն ժամանակ հիւանդը կուրանում է։ Երբեմն այնպիսի կուրութիւն է լինում, որ հիւանդանոցներում կըտրելով, (օպերացիա անելով), առողջացնում են աչքը. եթէ հատը փոքր է կտրելն օգնում է։ Բայց յաճախ տրախոմայից առաջացած այնպիսի կուրութիւն է պատահում, որի առաջն առնել չի

լինում և մարդ յաւիտեան կուրանում է։

Եթէ առողջ աչք ունեցողի կոպը դարձնենք և նայենք տակի երեսը կը տեսնենք որ նա ծածկուած է հարթ վարդագոյն թաղանթով։ Այդ թաղանթը թաց է և նրա վրայ նկատւում են արեան բարակ երակներ։ Ներքևի կոպի ներսի երեսը տեսնելը դժուար չէ բաւական է միայն նրան մի քիչ ցած քաշել։ Իսկ վերի կոպի ներսի երեսը տեսնելը աւելի դժուար է. որպէսզի կարելի լինի տեսնել, բժիշկները նրան յետ են դարձնում մի առանձին միջոցով։ Սովորաբար մենք տեսնում ենք աչքի մի փոքր մասը միայն, իսկ նրա մնացածի մի մասը առաջից ծածկուած է լինում կոպով իսկ յետևի մասը տեղաւորուած է աչքի խոռոչում։ Եթէ աչքը դուրս հանենք այդ խորշից, այն ժամանակ նա կլոր գնդի պէս կերևայ, այդ պատճառով էլ նրան աչքի խնձոր են ասում։

Տրախոմայի ժամանակ կոպերի վրայի եղած փոփոխութիւնը սովորաբար շատ աննշան է լինում, իսկ յետոյ այդ աւելի ու աւելի է աչքի ընկնում։ Կոպերի ներսի մակերևոյթը ուռչում, կարմրում է, նրանց վրայ երևում են փոքրիկ դեղնամոխրագոյն ելունգներ, որոնք հատիկների նման են լինում. ահա այդ ելունգները տրախոմայի գլխաւոր նշաններն են որոնցով այս հիւանդութիւնը

տարբերւում է աչքի միւս տեսակ հիւանդութիւններից։ Հիւանդութեան սկզբում այդ հատիկները քիչ են լինում, այնպէս որ անծանօթ մարդը դժուարանում է նրանց որոշել։ Բայց պատահում է որ նրանք այնպէս խիտ առ խիտ նստած են լինում, իրանց տեսքով յիշեցնում են ձկնկիթի (խաւիար) հատիկները։ Հնացած հիւանդութեան դէպքերում պատահում է որ հատիկները իրար հետ միանում են այնպէս որ կոպերի տակը կարծես թէ աւելորդ միս է աճում։

Ժամանակ անցնելուց յետոյ տրախոմայի հատիկները ճաքում են, որոնցից յետոյ նրանց տեղը մնում են սպիտակ նշաններ. նրանք աւելի որոշ նկատւում են վերեի կոպի վրայ։ Սրանք նոյնպիսի սպիներ են, ինչպէս որ մարմնի վրայ առաջանում են վէրքերից կամ այրուելուց յետոյ։

Զեղանից շատերը տեսած կը լինին թէ ինչ հեռքեր են թողնում այդպիսի վէրքերը։ Երբեմն մատը քաշւում է դէպի ձեռքը կամ ամբողջ ձեռքը դէպի մարմինը։ Տրախոմայի հատիկներից յետոյ մնացած սպիները նոյն ազդեցութիւնն են ունենում կոպերի վրայ։

Կոպի ներսի երեսը, որ առաջ փայլուն, կոկ, վարդագոյն էր, փոխւում է աւելի մուխգոյնի, ծածկւում է սպիների սպիտակ բծերով խոկ սպի-

ները կուչ են բերում կոպերը։ Կոպերի կուչ գալուց էլ ծալւում են արտևանունքները և բերում աչքի խնձորը, որ պատճառ է լինում հատի գալուն և կուրանալուն։ Նոյն այս պատճառից առաջանում են տրախոմայի նահ ուրիշ հետևանքները։ Սպիները քաշում, կուչ են բերում կոպերի ներսի թաղանթի վրայ գտնուած արտասունքի խողովակների անցքերը, այս պատճառով էլ արտասուքն տելի քիչ է դուրս գալիս, քան թէ առողջ ժամանակն էր։

Իսկ արտասուքը կարևոր է մեր աչքը փոշուց պաշտպանելու համար, որը այդ հեղուկը լուանում, հեռացնում, է. եթէ արտասուքը չը լինէր, աչքի մէջ ընկած բաների շնորհիւ նա շարունակ պիտի դրգռուէր։ Այս պատճառով էլ տրախոմայից անցնելուց դեռ մի քանի տարի յետոյ էլ աչքերը շարունակ բորբոքւում ու ճպռոտում են։ Ընդհանրապէս տրախոմայով երկար ժամանակ հիւանդացած մարդու աչքերը եթէ չը կուրանան էլ, առողջ էլ չեն լինում։

Տրախոման սաստիկ վարակիչ հիւանդութիւն է. *վարակիչ են հիւանդի աչքերից արտաղրուած շիլան ու արտասուքը։* Տրախոմայի ժամանակ որքան որ շատ է լինում աչքի ճիպը, այնքան էլ հեշտ կը տարածուի վարակումը։ Տրախոմայի

վարակիչ յատկութեան պատճառով հազիւ է պատահում, որ ընտանիքի մէջ միայն մէկը տրախոմայով հիւանդանայ։ Հէնց որ յայտնուեց թէ ընտանիքի մէջ մէկը տրախոմա ունի, համարեա միշտ նոյն ընտանիքի մէջ մի քանի հիւանդ մարդիկ կըլինին, մինչև իսկ բոլորը։ Տրախոմայի վարակուելուց աւելի քիչ կարող են վախենալ նրանք, որոնք կատարում են բժիշկների բոլոր խորհուրդները, կամ նրանք, ում որ ծանօթ են հիւանդութեան յատկութիւնները և վարակուելու պատճառները։ Հիւանդները միշտ պէտք է յիշեն, որ իրանք հիւանդութիւնը կարող են ուրիշին տալ, իսկ առողջները պէտք է միշտ զգուշանան հիւանդներից։—Հիւանդութեան յատկութիւնների մասին մենք պատմեցինք, իսկ հիմա կը պատմենք, թէ ինչպէս են հիւանդանում։

—Տրախոմա ունեցող հիւանդից շատ յաճախ վարակում են լուացուելու ժամանակ։ Գիւղերում շատ անգամ պատահել է տեսնել, որ ընտանիքի բոլոր անդամները լուացում են միևնոյն ամանից. նրանից բռով ջուր են վերցնում, և երեսները լուանում։ Այդ ամանի ջրով լուացում է հիւանդը. նա ձեռքերով տրորում է աչքերը, մատներով ճիպոտը պրծցնում և այդ ճպռոտ մատները նորից կոխում է ջրի մէջ և ճիպոտը

ունի։ Պէտք է միշտ հետևել, որ աչքացաւ ունեցողն օրական մի քանի անգամ լուանայ ձեռքերը, որովհետև վարակիչ թոյնը յաճախ ձեռքերի միջոցով փոխանցւում է մէկից միւսին։ Պէտք է շատ զգոյշ լինել և չսրբուել միևնոյն երեսսրբիչով, որով աչքացաւ ունեցողն է սրբուել և չը լուացուել միևնոյն ամանի ջրից։ Նմանապէս չը պէտք է գլուխը դնել միևնոյն բարձի վրայ, որի վրայ որ հիւանդն է դրել իւր գլուխը։ Հիւանդի սպիտակեղէնը պէտք է խնամքով լուանալ և լուացողը չպէտք է ձեռքերը դիպցնէ իւր աչքերին, որովհետև սպիտակեղէնի վրայ կարող է վարակիչ թոյն մնացած լինել։ Շատ լաւ կըլինէր եթէ հիւանդի սպիտակեղէնը մինչև անգամ առանձին լուացուէր։ Շատ կարևոր է հոգալ բնակարանի մաքրութեան մասին, բաց անել պատուհաններն ու դուռը օդը մաքրուելու համար և աշխատել որ փոշի կամ ծուխ չը կանգնի նրա մէջ. թարմ մաքուր օդը անհրաժեշտ է մարդուս առողջութեան համար։

Ինչպէս առաջ, այնպէս էլ այժմ տրախոմայով աւելի հիւանդանում են գիւղացիները, գիւղական բժիշկների ասելով, գոլորի մէջ իւրաքանչիւր տասը մարդուց մէկը հիւանդ է լինում տրախոմայով Այդ պատճառով էլ գիւղացիները ծառայութիւնը վեր-

ջանելուց յետոյ հետը տուն է բերում աչքացաւը և նրանից վարակւում են ազգականները։ Ուստի եթէ նկատւում է որ վերադարձող զինուորն աչքացաւ ունի, պէտք է նրան շուտով բժշկի մօտ ուղարկել, որ նա նայէ, բժշկէ հիւանդին։

Զանազան վարակիչ հիւանդութիւններ, դրանց հետ նաև տրախոման շատ անգամ տարածւում են օտար տեղերից եկող բանւորները, որոնք վարձւում են գիւղերում դաշտային աշխատանքների համար։ Նրանք շատ հեշտութեամբ իրանց հիւանդութիւնները տարածում են տեղական բանւորների ու հողատէրերի մէջ։ Գիւղական աշխատանքների ժամանակ շատ հեշտ է տրախոմայով վարակւել, որովհետև աշխատելիս մանաւանդ կալսելիս, խիստ փոշի է բարձրանում, որից համարեայ բոլոր բանւորները աչքացաւ են ստանում։ Տրախոմա ունեցող հիւանդի աչքերը վատանում են կալի փոշուց, ճիպոտը սաստկանում է, որից հեշտութեամբ ցաւը անցնում է ուրիշներին։

Առողջների աչքերն էլ հեշտ են վարակւում տրախոմայով, երբ նրանք փոշուց բորբոքուած են լինում։ Աշխատելու ժամանակ կարելի է ակնոցներ գործածել որ մանաւանդ պէտք է կալսելիս. ակնոցները պաշտպանում են աչքերը փոշուց։ Ակնոց դնելուց առաջ՝ պէտք է մաքուր

սրբել ապակիները, եթէ ոչ նրանք կարող են ցաւը նոր դնողին փոխանցել եթէ աչքացաւ ունեցող մարդ է դրած եղել։

Տրախոմա հիւանդութիւնը պատահում է նաև գործարանների բանւորների մէջ, երբ նրանց աշխատանքը կատարւում է մշտական փոշու մէջ, և երբ շատերն ստիպուած են լինում բացի դրանից աշխատել շիկացած վառարանների առաջ, բարձրաստիճան տաքութեան մէջ։ Ինչպէս փոշին, այնպէս էլ տաքութիւնը սաստիկ վնասում են աչքերին և նպաստում վարակման տարածելուն եթէ բանւորներից որևէ մէկը վարակուած է։ Միևնոյն ժամանակ ի նկատի պէտք է ունենալ որ գործարանների բանւորները շատ դէպքերում ապրում են միասին բանւորական տներում խառնուած կերպով, ուստի, զարմանք չէ, որ նրանք վարակւեն իրարից։ Երբ վարակւում է մի մարդ, որ միջոց ու ժամանակ ունի բժշկուելու այդ այնքան էլ երկիւղալի չէ, բայց երբ բանւորն է վարակւողը, այդ արդէն կատարեալ դըժբախտութիւն է։ Բժշկի մօտ գնալ նա կարող է միայն տօն օրերին, իսկ ցաւած աչքերով աշխատելը, շատ ու շատ ծանր է նրա համար։ Բացի դրանից, մէկ էլ տեսար, գործից հանեցին, որովհետև վատ տեսնող բանւորի արած գործն ինչ

պէտք է լինի։ Եւ ահա աչքացաւի պատճառով նա իւր ընտանիքով մնաց փողոցում, որովհետև ժամանակին չկարողացաւ բժշկուել։ Մշակ դասակարգի համար շատ կարևոր է առողջարար բնակարան ունենալը։ Նրան ուժասպառ է անում աշխատանքը և վատ է ազդում նրա առողջութեան վրայ։ Հետևաբար այնպէս պէտք է լինի, որ նա կարողանայ հանգստանալ ընդարձակ և լուսաւոր բնակարանում, փոշուց ու մնասակար գոլորշիներից ազատ։

Տրախոման երբեմն սաստիկ զարկանում է դպրոցներում։ Աշակերտներն իրար վարակում են խաղալու միջոցին, ինչպէս նաև նստարանների վրայ նստած ժամանակ։ Որքան որ աւելի վատ է դպրոցը, որքան որ աւելի նեղուածք են նստարանները այնքան էլ աւելի հեշտ տարածւում է աչքացաւը։ Դպրոցը պէտք է լինի ընդարձակ, լուսաւոր և չոր, այն ժամանակ համաճարակ հիւանդութիւնները աւելի քիչ վտանգաւոր են։ Եթէ ուսուցիչը նկատում է որ աշակերտներից մէկը տրախոմա ունի, այս դէպքում պէտք է նրան միւսներից առանձին նստեցնի. պէտք է հետևի, որ աշակերտը ձեռքերը լուանայ. չտրորէ աչքերը և ուղարկէ բժշկի մօտ առողջանալու։ Սակայն ամէն անգամ ուսուցիչը չի կարող տրախոման

ճանաչել ինքը. այդ պատճառով էլ անհրաժեշտ է որ բժիշկն ինքը յաճախ դպրոց այցելէ և քննէ աշակերտների աչքերը։

Բժշկական քննութիւնները օգտակար են նաև բոլոր այն տեղերի համար, որտեղ որ ապրում, կամ աշխատում են միասին շատ մարդիկ. օրինակ, գործարաններում, աշխատանոցներում, բանդերում, ապաստանարաններում և այլն։

Այդ տեսակ քննութիւնները կարևոր են թէ առողջների և թէ հիւանդների համար։ Առողջները կ'զլուխանան տրախոմայով վարակուելուց, երբ կ'իմանան, որ ընկերները հիւանդ են, իսկ հիւանդները ժամանակին կ'սկսեն բժշկուիլ ցաւից, որ իրանք առանց բժշկի չէին հասկանալ։ Իսկ ցաւը որքան որ շուտ բժշկուի, այնքան էլ աւելի շուտ կ'առողջանայ։

Տրախոմայից բժշկուելու համար երկար ժամանակ է պահանջւում. եթէ սկզբից անմիջապէս չեն բժշկել, այդ դէպքում նա շատ դժուար բուժելի ցաւ կը դառնայ։ Տրախոմայով հիւանդացողներին կարելի է միայն մի խորհուրդ տալ,— այն է, անմիջապէս բժշկին դիմել, պէտք չի սպասել որ ցաւը սաստկանայ։ Բժշկուելու ժամանակ պէտք է համբերող լինել և ժամանակից առաջ վերջ չը տալ բժշկուելուն. երբեմն հարկաւոր կը

լինի բժշկի մօտ երկար ժամանակ գնալ—դալ մինչև առողջանալը։ Այս բանը շատ հիւանդներ հասկանում են, ուստի և ասում են. «հիւանդութիւնը վիթերով է մտնում, մխալով դուրս գալիս։»

Աւելի շուտ առողջանալու համար տրախոմայով հիւանդները պէտք է պահպանեն իրանց աչքերը փոշուց, ծուխից և պայծառ լոյսից. իսկ որպէս զի իրանց հիւանդութիւնը ուրիշներին չանցնի, պէտք է որ հիւանդները շուտ-շուտ իրանց ձեռքերը լուանան, աչքերը իզուր տեղը շարարեն, որբուելու համար առանձին երեսսրբիչ պահեն, միևնոյն ամանի ջրով ուրիշների հետ չը լուան իրանց ձեռքերը ու երեսը, առանձին տեղ դնեն իրանց շարերն ու իրեղէնները, մանաւանդ այն իրեղէնները, որոնք աչքին են դիպել, օր. շորի այն կտորը, որով աչքերի ճիպոն են սրբել, պէտք է այրել կամ ձգել մի այնպիսի տեղ, որ մարդու ձեռք չընկնի։

Հիւանդի համար շատ վատ կը լինի, եթէ նա լսէ պառաւներին, դալլաքներին և գանդան տգէտ մարդկանց։ Սրանցից իւրաքանչիւրը իւր ձևով է բժշկում այնպիսի խորհուրդներ է տալիս որոնցից աչքերը ոչ թէ կ'առողջանան, այլ կը քորքրուին և աւելի խիստ կը թուլանայ նրանց տեսողութիւնը քան թէ ցաւի ժամանակ։ Շատ անգամ լսելով ժողովրդի մէջ տարածուած գանդան հրէշաւոր միջոցները, որոնցով ուզում են իբր թէ առողջացնել, մարդ չի իմանում զայրանայ, թէ ծիծաղի։ Պատահել է որ տրախոմա ունեցողին առաջարկել են հում միս, կամ այբ դնել աչքերին, աչքը լուանալ ու մարդու, խոզի, բուռակի և ուրիշ կենդանիների մէզով։ Հասկանալի է որ ամէն մի գարշահոտ բան կարող է աչքին վնաս տալ։ Շատ անգամ հիւանդները կուրանում են հէնց տգէտ մարդկանց առաջարկած միջոցներից։

Տրախոման բժշկելու մի զզուելի միջոց գործ են դնում պառաւներն ու դալլաքները։—Նրանք հիւանդի աչքերը լիզում են։ Աչքերին օգուտ տալու մասին այստեղ խօսք անգամ չի կարող լինել. շատ անգամ է պատահել որ ուղղակի վնասուել են։ Ահա թէ ինչ կարող է պատահել։ Եթէ լիզողը հիւանդ է վատ ցաւով (սիֆիլիսով), այն ժամանակ նա իւր լեզուի միջոցով տրախոմա ունեցողին տալիս է իւր ցաւը։ Նորերս Վեատկա նահանգից գրել էին լրագրում, թէ մի գիւղում մի պառաւ լիզում էր հիւանդների աչքերը, և ում աչքերը որ նա լիզում էր, նրա մէջ յայտնւում էր վատ ցաւը* և կարճ միջոցից յետոյ այդ գիւղում

*) Այս ցաւի մասին գեղեցիկ կերպով պատմուած է բժ Բուդուլեանցի «Սիֆիլիս» անունով գրքոյկում։

մէկը միւսից յետոյ հիւանդացան ութսուն հոգի։ Իսկ վատ ցաւը տրախոմայից էլ շատ աւելի վտանգաւոր է, ուրիշ շատ ցաւերից էլ։

Մի անգամ ընդմիշտ պէտք է մարդ լաւ միտքը պահէ, որ միայն նա կարող է բժիշկ լինելով ով որ լաւ սովորել է այդ բանը որովհետև հիւանդութիւններ ճանաչելուց ու բժշկելուց աւելի դժուար բան չկայ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0266854

7848